



ԸՆՏԱՆԻՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ինչն է ապահովագրվում

- Ընտանիքի ապահովագրության պայմանագրով Դուք կարող եք ստանալ դրամային փոխատուցում, եթե Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամների կյանքին կամ առողջությանը պատճառվել է վնաս, որն առաջացել է դժբախտ պատահարի կամ սխալ բժշկական մանիպուլյացիայի հետևանքով:
- Հատուցումը իրականացվում է վնասի չափով՝ առավելագույնը 1,800,000 ՀՀ դրամի չափով մեկ պայմանագրի գծով: Յուրաքանչյուր ապահովագրված անձի գծով հատուցման առավելագույն գումարը չի կարող գերազանցել 500,000 ՀՀ դրամը:

Որո՞նք ենք ապահովագրական դեպքերը՝ Դժբախտ պատահարը

Պայմանագրով նախատեսված անսպասելի, հանկարծակի իրադարձությունն է, որը տարբերակվում է ըստ առաջացման բնույթի, վայրի և ժամանակի՝

- Մարմնական վնասվածք
- Սուր թունավորում
- Դժբախտ պատահարի արդյունքում I, II, III խմբի հաշվառման դեպքերում
- «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռքբերում
- Մահ դժբախտ պատահարի արդյունքում

Սխալ բժշկական մանիպուլյացիաները

Բուժաշխատողների կողմից թույլ տրված և իրավասու մարմինների կողմից հաստատված շեղումներն են բժշկագիտությամբ սահմանված մանիպուլյացիաների իրականացման տեխնիկայից, որոնք առաջացրել են հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի առողջության համար բացասական հետևանքներ՝

- Գլխուղեղի, ողնուղեղի, ներքին օրգանների վնասում
- Ոսկրերի կոտրվածք
- Հոդախախտ, վերք, կտրվածք
- Այրվածք, ցրտահարություն, էլեկտրահարություն
- Սեղմում, օրգանի լրիվ կամ մասնակի կորուստ

Բացառություններ (ներառում է, սակայն չի սահմանափակում)

- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության արդյունքում առաջացած իրադարձությունները
- Քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուլիսների կամ գործադուլների, ահաբեկչական գործողությունների նմանատիպ, կամ դրանց հավասարեցվող իրադարձությունների (անկախ պատերազմի կամ այլ իրադարձությունների հայտարարված լինելու հանգամանքից), ինչպես նաև կորաշարժերի կամ այլ ռավական միջոցառումների արդյունքում առաջացած իրադարձությունները,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձը հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի կողմից դիտավորյալ հանցանք գործելու հետևանքով,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի ակտիվ (ակտիվ պարմակող նյութերով), ինչպես նաև թմրանյութերով, տոքսիկ նյութերով թունավորումը, եթե իրավասու մարմինների կողմից չի սահմանվել նրանց բռնի ներարկումը, սխալմամբ օգտագործումը,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից իրեն դիտավորյալ մարմնական վնասներ հասցնելը, ապահովագրված անձի կողմից սպորտի վտանգավոր տեսակներով (ավտո- և մոտոսպորտ, օդային սպորտ, ձիասպորտի ցանկացած տեսակներ, մարտարվեստի տեսակներ, պալինիպ, լեռնային և ջրային սպորտ, ստորջրյա նավարկություն, հրաձգային սպորտ և այլն) վրադրվել կամ գիտակցաբար իրեն բացառիկ վտանգի ենթարկելը:

Ո՞վ կարող է կնքել ապահովագրության պայմանագիր

18-70 տարեկան ցանկացած անձ

Ո՞վ կարող է ապահովագրվել

3-70 տարեկան ընտանիքի անդամ



Ապահովագրված անձի ընտանիքի անդամներ են հանդիսանում

- կինը (ամուսինը),
- երեխաները (այդ թվում՝ որդեգրված)
- ամուսինների (և կնոջ, և ամուսնու) ծնողները
- ամուսինների (և կնոջ, և ամուսնու) քույրերն ու եղբայրները, ովքեր Հիմնական Ապահովագրված անձի հետ միասին վարում են ընդհանուր տնտեսություն:

Ինչ պետք է անել Ապահովագրական պատահարի դեպքում

- Անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում (սակայն ոչ ուշ քան 48 ժամվա ընթացքում) հայտնել Ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի առաջացման մասին՝ վանգահարելով (012) 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարով,
- Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում այդ մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (Բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն),
- Ապահովագրական ընկերությանը ներկայացնել դիմում-պահանջագիր ապահովագրական հատուցման մասին, ինչպես նաև ապահովագրության պայմաններով սահմանված այլ ուղեկցող փաստաթղթեր:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապահովագրության պայմանագրի/վկայագրի պարտադիր պայմանները/վավերապայմանները, ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցման կարգը և այլ մանրամասները, ինչպես նաև վեճերի լուծման կարգը կարգավորվում են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի 07.07.2014թ.-ի Խորհրդի նիստի թիվ 05 արձանագրությամբ հաստատված ԴԺԲԱԽՏ ՊԱՏՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ (Կող. TC750-03-02, խմբ.5.), որոնց մասնամասներին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Ապահովագրական ընկերության www.rgs.am պաշտոնական կայքը: